


6247



C.1930/123

25 AUG 2005

14 NOV 2000

4
121894

3КП13

5-38

Ա. ՅԵՂԻՍՉԱՐՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОДОНОСЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ԺԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(Համկումկուսի Կենտրոնի Նոյեմբերյան
պլենումի արդյունքները)

3КП13
5-38

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հր. № 919. Գրառեպգալ 1672 (բ) Տիրաժ 3090
 Գետհրատի առաջին տպարան Կաղաքապատում
 Պատվեր № 26

1. 1927/28 ՏԱՐՎԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նախքան այս տարվա հեռանկարներին անցնելը, տեսնենք, թե անցրած տարին (1927/28) ինչ տնտեսական արդյունքներ տվեց մեզ, ուրիշ խոռով, ինչպիսի պարմաններում ենք մենք սկսում մեր վագրը առաջ այս տարի:

Մի տարի առաջ մենք նախագծել ենք, վոր մեր պետական արդյունաբերությունը 1927/28 տնտեսական տարում $15,8^{\circ}/\text{o}$ ավելի արդյունք պետք է տա, քան 1926/27 տնտեսական տարում: Պետք է ասել, վոր այդպիսի գարգացման բարի (կամ տեմպ) վոչ մի կապիտալիստական լերկիր չի ունեցել իր պատմության մեջ: Միայն Խորհրդակին իշխանությունն է ապահովում այդպիսի թափ: Ի՞նչ դուրս յեկավ մեր այդ նախագծից: Պարզվեց, վոր պետական արդյունաբերությունը վոչ թե $15,8^{\circ}/\text{o}$ ավելի արդյունք տվեց անցրած տարվա հետ (1926/27) համեմատած, այլ $22,5^{\circ}/\text{o}$. ուրիշ խոռով՝ մենք տվինք-անցկացանք մեր պլանից, սպասածից ավելի արտադրեցինք: Դա շատ խոշոր հաղթանակ եր մեզ հումար: Դա մի անգամ ևս ապացուցեց, թե ինչպիսի, հաճախ անսպասելի, հնարավորություններ ունենք մեր առաջխաղացումն ավելի ուժեղացնելու, արագացնելու:

Հիմա, յեթե վերցնենք մեր ժողովրդական տնտեսության համայնացված մասը (սեկտորը) և վոչ համարնացված մասը, կտեսնենք, վոր 1927/28 տնտեսա-

կան տարում համայնացված մասի ֆոնդերը կազմում
էն 52,4%, իսկ 1926/27 թվին՝ 51,4%, ուրիշ խոսքով,
ամբողջ Խորհրդային Միության տնտեսության կիսից
ավելին բա արձինի համայնացված ե, և այս տարի յել
այդ համայնացված մասն ավելի յել զարգացել՝ համե-
մատած 1926/27 տարվա հետ:

Սա ևս մի ապացուց ե, վոր մենք գնում ենք
սոցիալիստական ճանապարհով:

Իսկ ինչպես եր գրությունը գյուղում անցյալ
տնտեսական տարում: Մենք գիտենք, վոր քաղաքում
շատ ուժեղ են սոցիալիստական ձեւնարկությունները.
գիտենք, վոր մեր գյուղը ներկայացնում ե իրենից
զիմափորապես մասն, անհատ տնտեսությունների,
պարզ ապրանքային տնտեսությունների մի պատկեր.
գիտենք, վոր գյուղում սոցիալիստական ձեւն են՝
կոլեկտիվ տնտեսությունները և խորհրդային տնտե-
սությունները: Ի՞նչպիսի գրություն են ապրում այդ
սոցիալիստական ձեր տնտեսությունները: Վիճակա-
գրությունը հետեւալ պատկերն ե տալիս դրանց նկատ-
մամբ: Հաս ցանքսերի քանակի. —

1926/27 թ. կոլեկտիվ տնտեսություններն ունե-
ին 0,87 միլիոն հեկտար, իսկ 1927/28 թ. 1,70 միլ.
հեկտար. ուրեմն կոլտնտեսությունների ցանքսերն
անել են համարյա 100%: Պու իսկ խորհրդային տնտե-
սությունները. 1926/27 թ. նրանք ունեին 1,26 միլ.
հեկտար ցանքս, իսկ 1927/28 թվին 1,30 միլ. հեկտար.
տեսնում ենք, վոր խորհրդային տնտեսությունների
ցանքսերն ել անել են 0,04 միլիոն հեկտար:

Հիմա վերցնենք մի ուրիշ նշանացուց, տեսնենք,
թե կոլտնտեսությունները և խորհրդային տնտեսու-

թյուններն ինչպիսի արդյունք են տվել ըստ ար-
ժեքի (սուրբու հաշվի) 26/27 և անցյալ տնտեսական
տարում:

	1926/27 թ.	1927/28 թ.	աճում.
միլ. սուր.	միլ. սուր.	միլ. սուր.	
Կոլտնտեսություն.	103	189	86
Խորհրդ. տնտեսութ.	195	206	11

Ընդամենը՝ 298 395 97

Բերած տախտակից յերեսում ե, վոր թե կոլտնտե-
սությունները և թե խորհրդային տնտեսությունները
անցյալ տնտեսական տարում ավելի արդյունք են տվել,
քան 1926/27 թ.:

Խոսք չկա, վոր մեր կոլտնտեսությունները և
խորհրդային տնտեսությունները դեռ յեկա թիչ են, գեռ
և վճռական դեր չեն խաղում գյուղատնտեսության
արտադրության նկատմամբ, դեռ ևս հացամթերքների
մեծ մասը մեզ տալիս ե անհատական գյուղական տնտե-
սությունը, բայց փաստ ե նաև այս, վոր տարեց-տարի
նրանք (կոլտնտեսությունները և խորհրդային տնտե-
սությունները) զարգանում են և ինչպես կտևոնենք,
այս տարի ել ավելի յեն զարգանալու:

Սա նույնպես մեր անցյալ տնտեսական տարվա
խոշոր հաղթանակներից մեկն ե:

Բոլորս գիտենք, վոր կոմունիստական կուսակ-
ցությունը Խորհրդային իշխանությունը վորոշիլ ե,
վորպեսզի մեր գյուղացիական յերկիրն իր հետ ընկած
պապենական տեխնիկայով դարձնի արդյունաբերական
յերկիր ժամանակակից տեխնիկայով: Սա մի տարվա
ըստ չե. մենք մեր յերկրի տնտեսության, տեխնիկական
պատկերը կարող ենք վերջնականապես փոխել մի

շարք տարիների լնթացքում: Եյականն այն և, վար մենք պետք ե ինչքան կարելի յեւ հասնենք յեվ անցկենանք արտասահմանական լեռկեների տեխնիկային, արդյունաբերության: Գնում ենք մենք այս ճանապարհով: Թվերը հետևյան են ասում. մենք հիմա 403^0 օ-ով ավելի մոտորներ (двигатели внутреннего горания) ենք արտադրում, քան պատերազմից առաջ: Մենք 201^0 /₀ ավելի գյուղատնտեսական մեքենաներ ենք արտադրում, քան պատերազմից առաջ: Մենք մոտ լեռեք անգամ ավելի ելեկտրական ուժ ենք արտադրում, քան պատերազմից առաջ: Վերջապես, յեթե համամատենք, թե ինչքան արդյունք եր արտադրում մեր արդյունաբերությունը և ինչքան արդյունք՝ գյուղատնտեսականի առաջընթացի առաջ:

1925/26 թ. արդյունաբերությունը տալիս եր $12,5$ միլիարդի արդյունք, իսկ գյուղատնտեսությունը՝ $17,4$ միլիարդի: Ուրիշ խոսքով՝ գյուղատնտեսությունը շատ ավելի արդյունք եր տալիս, քան արդյունաբերությունը:

Իսկ 1928/29 թվին արդյունաբերությունը տալու ցւ 19 միլիարդի արդյունք, իսկ գյուղատնտեսությունը՝ $18,6$ միլիարդի: Այլ խոսքով, այս քանի տարին մեր արդյունաբերությունը վոչ միայն հասավ գյուղատնտեսության արտադրածին, այլ և գալու յեւ ու անցկենալու այս տարիի: Այլպիսով կարող ենք ասել, վոր մեր լեռկերն այս քանի տարվա ընթացքում շատ խոշոր քայլեր ե արել գառնալու արդյունաբերական լեռկեր:

Քննելով մեր անցյալ տնտեսական տարվա ար-

դյունքները՝ կարող ենք հետեւալ լեզրակացությունը հանել:

1) Մեր լեռկերի արտադրական ուժերը քաղաքում սպասածից ավելի զարգացման ուժեղ թափ են ունեցել:

2) Համայնացած մասը թե քաղաքում և թե գյուղում ավելի յեւ զարգացել, քան թե 1926/27 տարում:

3) Մենք խոշոր քայլեր ենք արել վերածելու մեր լեռկերը արդյունաբերական լեռկերի:

4) Մասնավորապես գյուղում սոցիալիստական ձեւերը, թեև դեռ մեծ տեղ չեն բռնում, բայց ընդհանուր առմամբ նույնպես զարգացել են անցյալ տնտեսական տարում:

2. Մեր ԴժվարՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ «ՆԵՐ ՏԵՂԵՐԸ»

Անցյալ տարվա մեր նվաճումներին, դրական արդյունքներին զուգընթաց մենք ունենք և այժմ ել ունենք և մի առ ժամանակ ել կունենաք գժվարություններ, նեղ աեղիք: Քիչ հետո մենք կտեսնենք այդ գժվարությունների պատճառները յեվ այն միջոցները, վորոնց շնորհիվ պետք ե մոտակա տարիների ընթացքում վերջ տանք այդ գժվարություններին: Հիմա պարզենք, վորոնք են այդ գժվարությունները: Մենք կարող ենք այդ գժվարությունները լեռեք խմբի բաժանել, մի խումբ գժվարություններ, վորոնք անմիջապես մեր աշխին են յերեվում, վորոնք մենք զգում ենք, ինչպես ասում են, անմիջապես մեր «կաշվի վրա». լեռկորդ խումբ գժվարություններ, վորոնք անմիջապես մեր աշխին չեն յերեվում, բայց վորոնք մենք նույնպես կարող ենք զգալ, թեև վոչ անմիջականորեն,

և վերջապես՝ լիրորդ խումբ դժվարություններ, վորոնք իմանալու համար պետք և դիմել մեր տնտեսական վիճակագրության:

Վորոնք են առաջին խմբի դժվարությունները: Առաջին՝ հացի և տոհասարակ պարենավորման մթերքների պակասը, լիրկրորդ՝ լայն սպառողական մթերքների ապահովական չփառքական մթերքների առվանքալին սովը (չիթ, առհասարակ՝ կտորեղեն, կոշիկ, կալոշ և ալլն), լիրորդ՝ անգործություն, մասնավորապես գլուղական անգործությունը: Այս «նեղ որիրը», դժվարությունները մենք ամեն որ և ամեն մեկս զգում ենք ու տեսնում:

Յերկրորդ խմբի դժվարություններ՝ առաջին՝ դյուզատնտեսական հում նյութերի պակասություն (բանբակ, վուշ, կաշվեղեն և ալլն), լիրկրորդ՝ շինանյութերի պակասություն, վորոշ տեսակի շինանյութերի պահանջը մի քառորդ մասով չի բավարարվում. լիրկրորդ՝ ու մետաղի, չուգունի պակասություն (չուգունի արտադրությունը գեռ չի հասել նախապատերազման նորմային, ի միջի այլոց այդ չուգունի պակասության շնորհիվ և մասամբ, վոր մեր արդյունաբերությունն այս տարի համեմատաբար քիչ բանվորներ և ընդգրկելու, քան անցյալ տարի):

Վերջապես լիրորդ խմբի դժվարությունները կամ «նեղ տեղերն» են՝ առաջին՝ ինքնարժեքի բարձր լինելը մեզ մոտ (անցյալ տարի պետք և ինքնարժեքն իջեցնելինք $6^0/0$, մինչդեռ իջեցրել ենք $5^0/0$ իսկ շինանյութերի վերաբերմաբ պետք և իջեցնելինք $15^0/0$, չենք իջեցրել). լիրկրորդ՝ աշխատանքի արտադրողականության չափազանց հետամսացությունը համեմատած կապիտալիստական լիրկրների հետ:

Յեթի ի մի խմբենք այդ բոլոր դժվարությունները, կարող ենք այսպիս վորակել կամ արտահայտել զրանք:

ա) Գյուղատնտեսությունը քիչ և տալիս, պարենավորման մթերքների և հում նյութի պահանջը չի բավարարում:

բ) Թեթև արգունաբերությունը քիչ և տալիս, լայն սպառողական մթերքների պահանջը չի բավարարում:

գ) Շանր արգունաբերությունը քիչ և տալիս (մասնավորապես չուգուն), թեթև արդյունաբերության և գյուղատնտեսության կողմից յեղած պահանջը չի բավարարում:

դ) Մենք դեռ լավ չենք կազմակերպում արտադրական պրոցեսը:

Մենք տեսնում ենք, վոր մեր դժվարությունների բնույթն ուրիշ ե, քան կապիտալիստական լիրկրների դժվարությունները: Կապիտալիստական լիրկրներում ընորիիվ մասսաների թշվառության, նրա գնողական ունակության ցածության, կապիտալիստները մտածում են, վիճ սպառեն արտադրածք. մեզ մոտը ընդհակառակը՝ շնորհիվ մասսաների տնտեսական վերելքին, նրանց գնողական ունակության բարձրացման, մենք մտածում ենք, վոնց անենք, վոր ավելի շատ և ավելի լավ վորակով արտադրենք, վորպեսզի բավարաբենք մասսաների բոլոր պահանջները: Մեր դժվարությունները, դրանք վերելի դժվարություններ են, իսկ կապիտալիստական լիրկրներում՝ դրանք (դժվարություններ) անկման դժվարություններ են:

3. ՎՈՐՈՒՔ ԵՆ ԱՅԴ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՅԱ-
ՃԱՌՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՎԵՐՋ
ՏԱԼ ՀԻՄՆՈՎԻՆ ԱՅԴ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Վերջերս բանվոր դասակարգի վորոշ շերտերում,
մեր կուսակցության զանազան ողակներում հայտնա-
րերվեցին տրամադրություններ, կարծիքներ, տեսա-
կետներ, ըստ վորոնց մեր դժվարությունները նրա-
նուում են, վոր մեզ մոտ ապրանքային սով և, հացա-
մթերքների և առհասարակ պարենավորման մթերք-
ների սով և լայն սպառողական մթերքների սով (չիթ,
կոչիկ և ալին), մթերքների, վոր արտադրում և արտա-
դրելու և թեթև արդյունաբերությունը։ Այնուհետև,
վոր այդ դժվարությունների պատճառը մեր սխալ քա-
ղաքականությունն և, վոր մենք տանում ենք զլուղի
նկատմամբ և կապիտալ ներդրումների նկատմամբ.
վոր իր թե մենք զլուղից շատ ենք վերցնում, զլուղը
գարձրել ենք մի տեսակ կոլոնիա (գաղութ) և այդ
շատ վերցրած միջոցները տալիս ենք վոչ թե թեթև
արդյունաբերության (սա մենք մոռացության ենք
տալիս), այլ ծանր արդյունաբերության, վոր մենք այդ
ծանր արդյունաբերության զարգացման մի այնպիսի
թափ ենք նախագծեր վոր մեր ժողովրդական տնտե-
սությունը տակից դուրս դալ չի կարող. բացի այդ,
զլուղից շատ վերցնելով, ուշադրություն շղարձնելով
զլուղական անհատ տնտեսություններին, մենք մեր
գլխավոր ուշադրությունը դարձրել ենք «լղարիկ» կոլ-
տնտեսություններին և խորհրդակին տնտեսություն-
ներին, վորոնք վոչ մի ուժ չեն ներկայացնում և վո-
րոնց վրա ծախսած գումարները քամուն տված գու-
մարներ են։ Դրա հետեանքով մեր զլուղատնտեսու-

թյունը հետ և գնում, չի զարգանում, դեգրադացիալի
է ինթարկվում։

Այսպիսով, ըստ այս տեսակետի, մեր դժվարու-
թյունների գլխավոր պատճառը վերջի վերջո—դա մեր
ծանր արդյունաբերության զարգացման ուժեղ թափն
ե, կամ, ինչպես ասում են, մեր լերկը ինդուստրիա-
լիզացիալի անհնարին (ժղունակառության համար)՝
տեմպն և, վոր այդ տեմպով, այդ թափով առաջ գնա-
լով, մեծ վտանգ և սպառնում բանվոր դասակարգի և
գլուղացիության շաղկապին և ալղպիսով մենք կենինի
պատգամն այդ շաղկապի ուժեղացման մասին չենք
իրագործում։

Փրկության միջոցը, դժվարություններից զուրս
գալու միակ ճիշտ միջոցը, ըստ այդ տեսակետը պաշտ-
պանողների, նրանումն և, վոր 1) քիչ վերցնենք զլու-
ղից, 2) թուլացնենք ծանր արդյունաբերության զար-
գացման թափը, ուրիշ խոսքով կապիտալ ներդրում-
ներն այնպես կատարենք, վորպիսզի թեթև արդյու-
նաբերությունն արագ զարգանա. այն ժամանակ նա
կտա լայն սպառողական մթերքներ, վորով թե քա-
ղաքը կրավարարի իր պահանջները, թե զլուղը. զլու-
ղացին ել ստանալով այդ մթերքները (կորորեղն, սա-
պոն, կոշկեղն և ալին), դրանց զիմաց հաց կտա, պա-
րենավորման մթերքներ կտա և պարենավորման մը-
թերքների սովու ել կլերանա և 3) պետք և զլուղում
մեր ուշադրության կենտրոնը դարձնենք անհատ
տնտեսություններին, միջոցներ ձեռք առնենք նրանց
բարձրացնելու, վորովհետ դրանք են (անհատ տնտե-
սությունները), վոր մեզ մատակարարում են պար-
ենավորման մթերքներ և վոչ թե կոլտնակառություններն
ու խորհրդակին տնտեսությունները։

Մենք պետք ե ուշի ուշով քննոնք այս տեսակի-
առ պաշտպանողների առաջարկությունները և տես-
նենք՝ ուր կզնանք, ի՞թի ընդունենք այս առաջարկու-
թյունները:

Նախ ձի՞շտ ե, վոր մեր դժվարությունները—
դրանք միայն լայն սպասողական ապրանքների սո-
վումն են կայանում, ուրիշ խոսքով, ձի՞շտ ե, վոր մեզ
մոտ ապրանքային սովը—դա սպասողական բնույթ ու-
նի վհչ, ճիշտ չե. մենք վոչ միայն պարեա ավորման
մթերքների, չթի, կոչկեղենի, սապոնի պակասություն
ունենք, այլև արտադրական միջոցների. գյուղացին
վոչ միայն կտորեղենի, սապոնի պակաս և զգում և
պահանջ առաջարում, այլև գյուղատնտեսական մեքե-
նաների (գերանզու, թիթեղի, միխի, շինանլութերի,
քիմիական պարարտացման): Բադաքում մենք վոչ
միայն պարենի մեծ պահանջ ենք առաջարում, այլ շե-
նանլութերի, մեքենաների, ելեկտրական ուժի, չուզումի
և լեթե ըստ արժեքի հաշվելու լինենք, կտեսնենք,
վոր այս պահանջը (ասենք արտադրական միջոցների
պահանջ) սկիլի մեծ ե, պակասն ավելի շատ ե, քան
այն ապրանքների պահանջը, վոր արտադրում և թե-
թե արդյունաբերությունը:

Ցերկորդ՝ սխալ ե այն, իրը թե մենք մոռացու-
թյան ենք տվել մեր թեթև արդյունաբերությունը.
Բնչ ե պահանջում թեթև արդյունաբերությունն իր
զարգացման համար, մեքենաներ և հում նյութ (բամ-
բակ, կտավհատ, փուշ, կաշվեղեն և այլն); Թեթև ար-
դյունաբերության զարգացման սահմանն ե՝ հում նյու-
թի կանխիկ քանակը. և ինչքան վոր այդ հնարավո-
րությունը (հում նյութի քանակը) լիղել ե, այնչափ

ել մենք զարգացրել ենք մեր թեթև արդյունաբերու-
թյունը:

Յերրորդ՝ ճիշտ չե, վոր չորրհիվ մեր քաղաքա-
կանության (շատ ենք վերցնում գյուղից, ուշադրու-
թյուն չենք դարձնում անհատ տնտեսություններին)
գյուղը, գյուղատնտեսությունը հետ ե զնում, քայլա-
վում ե, լրվում ե, անկման ըջանն ե ապրում:

Առանց թվերին դիմելու, կարելի լի առաջուց
առել, վոր այս հայտարարությունը սխալ ե. վորովհե-
տե լեթե ճիշտ լիներ, վոր մեր գյուղը հետ ե զնում,
դա կնշանակեր, վոր գյուղացիական մասսաների դրու-
թյունը վատացել ե և վատանում ե, դա կնշանակեր,
վոր այս հողի վրա պետք ե ուժեղանար գյուղացիական
մասսաների դժգոհությունը խորհրդալին իշխանու-
թյունից, դա կնշանակեր, վոր այդ դժգոհությունները
պետք ե իրենց կազմակերպված արտահայտությունը
գտնելին գյուղացիական ապատամբությունների մեջ;
Բայց ալպիսի դրություն մենք այսոր գյուղում չու-
նենք: Ճիշտ ե, մեր գյուղական ապարատի թերու-
թյունների հետևանքով կինեն տրուունչներ այս կամ
այն գյուղացու մեջ (խոսքը, իհարկե, միջակ և չքավոր
գյուղացու մասին ե), այս կամ այն ըրջանում, բայց
ասել, վոր միջակ գյուղացին, չքավոր գյուղացին լե-
րես և գերձել մեզնից, ապատամբություն և կազմա-
կերպում մեր դեմ, դա նշանակում ե կըկնել մեր թըշ-
նամիների սուտ լուրերը և բարբաջանքները:

Ինչ են առում թվերը մեր գյուղատնտեսության
մասին —

Վերցնեաք ցանքսերի տարածության շարժունը
(դինամիկան) վերջին տարիներս.

Յեթի 1913 թ. ցանքսերի տարածությունն ընդունենք $100^{\circ}/_0$, կտեսնենք, վոր ցանքսերի տարածությունը 1913 թ. համեմատած՝

1926/27 թ. կազմում եր $90,8^{\circ}/_0$
1927/28 թ. » $92,5^{\circ}/_0$:

Այլ խոսքով ցանքսերի տարածությունը, թելեվ դանդաղ, բայց ավելացել է:

Յիթի վերցնենք հացահատիկների արտադրությունն ըստ շնչագլխի, կտեսնենք, վոր

1925/26 թ. կազմում եր $32,4$ փութ
1926/27 թ. » $33,3$ »
1927/28 թ. » $30,6$ »

Կլի նկատում ենք թվերի, թեև դանդաղ, բայց աճեցում. իսկ 1927/28 թվի պակասը բացատրվում է նրանով, վոր Ուկրայնացում և Հրուսիս. Կովկասում աշնանացանի բավական խոշոր մաս վնասվեց գարնանը և բացի այդ, հուլիսին ել այդ ռայոններում մասնակի լերաշտ լեղավ. Վերցնենք մի ուրիշ նշանացուց. բանվորական անասունների քանակը.

1926/27 թվին ամեն մի 100 հեկտարին գալիս եր $25,6$ բանվորական անասուն, իսկ 1927/28 թվին ամեն մի 100 հեկտարին գալիս եր $27,4$ բանվորական անասուն:

Ուրեմն բանվորական անասունների թվի նկատմամբ ել, թելեվ դանդաղ, բայց անեցում ունեն:

Հիմա տեսնենք, թե ինչ առաջադեմ լերեռությունն էն կատարվել գուղատնտեսության մեջ վերջին տարիներս:

1926 թվին շարքացան ցանքսերի տոկոսը կազմում եր ամբողջ ցանքսերի $29,1^{\circ}/_0$, իսկ 1927 թվին

շարքացան ցանքսերի տոկոսը կազմում եր ամբողջ ցանքսերի $32,1^{\circ}/_0$:

Ուրեմն ավտեղ ել ունենք աճեցում:

1925 թվին $3.664.000$ հեկտար եր կազմում բազմագաշտան սիստեմը, իսկ 1927 թ.՝ $9.429.000$ հեկտար:

Ուրիշ խոսքով լերկու տարվա ընթացքում բազմագաշտան սիստեմը լեռապատկվել է:

Մյուս կողմից 1926/27 թվին ամեն մի հարյուր հեկտարին գալիս եր 9 ո. 90 կ. գյուղատնտեսական մեքենաներ, իսկ 1927/28 թ.՝ 11 ո. 94 կոպեկի: Ուրեմն գյուղատնտեսական մեքենաների քանակը նույնպես, թելեվ դանդաղ՝ բայց անել է:

Յեվ վերջապես, այս տարի մեր գյուղատնտեսությունն արտադրում է հախազատերազմբան շրջանի հետ համեմատած $58,5^{\circ}/_0$ ով ավելի տեխնիկական բույսեր:

Թե գյուղատնտեսության համայնացված մասը (կոլանտեսությունները և խորհրդարարին տնտեսությունները) ինչպիսի զարգացում են ունեցել թե ցանքսերի ավելացման և թե բերքի քանակի ավելացման տեսակետից, այդ մենք տեսանք առաջին գլխում:

Այս բոլորից հետո գալիս ենք միայն մի լեզրակացության, վոր իրականության չի համապատասխանում այն կարծիքը, իրը թե, գյուղատնտեսությունը հետ և գնում: Վերը բերած թվերը բերում են մեզ միայն մի լեզրակացության, վոր գյուղատնտեսությունը նույնպես առաջ ե գնում, զարգանում է, բայց այդ զարգացումը կատարվում է ռայ դանդաղ բավարարել չի կարող, վորի մասին քիչ հետո կխռունք: Հիմա մի ըստեցնենք վերը հիշած տեսակետի կողմն ոկիցների ռեցեպ-

տը, այսինքն ծանր արդյունաբերության թափը թու-
լացրինք, զարգացրինք թեթև արդյունաբերությունը,
կոլտնտեսություններին և խորհրդակին տնտեսությունն-
երին քիչ ուշադրություն դարձրինք, գլխավորապես
գյուղացիական անհատ տնտեսությունները դարձրինք
մեր ուշադրության կենտրոնը. ուր կերթանք մենք
այսպիսով: Ճիշտ ե, գույց մի տարի մեր շուկան կը-
լցվի լայն սպառողական մթերքներով, իսկ հետո:
Մենք գիտենք, վոր մեր պահանջները տարից տարի
ավելանում են, ևնց թեկուզ այն պատճառով, վոր ամեն
տարի մեր ազգաբնակչությունը մոտավորապես 4 միլ-
ավելանում է: Արդյոք գյուղացին կտրեղենավ, սապո-
նավ, իր պապենական տեխնիկայով կառո՞ղ ե այնպես
բարձրացնել գյուղատնտեսությունը, այնքան պարենավոր-
ման մրերքներ ու հում նպաթ արտադրել, վոր բավա-
րարի թե իր պահանջները և թե քաղաքի պահանջնե-
րը: Արդյոք մեր քերեկ արդյունաբերությունը մի քանի
տարուց հետո, վերտեղից պետք ե ստանա մեքենա-
ներ, վորպեսզի շատացնի իր արտադրությունը, բա-
վարարելու համար քաղաքի և գյուղի պահանջները:

Ուրեմն, լեթե նույնիսկ համաձայնենք մի բոպե, վոր մեզ մոտ միայն կամ գլխավորապես լայն սպառողական ապրանքների սով ե, աեսնում ենք, վոր վերը հիշած սեցեպտով մենք այդ ապրանքային սովը վոչ թէ հիմնովին կվերացնենք, այլ ընդհակառակը, մի քանի տարուց հետո մենք կանգնած կլինենք ավելի սուր ապրանքային սովի առաջ, վորովհետև վոչ գյուղատնտեսութիւնը և վոչ ել թեթև արդյունաբերությունն այս գրութիւմը ի վիճակի չեն լինի բավարարելու մեր մեծացած պահանջները:

*Ել չենք խռուռմ այն մասին, վոր մեզ մոտ վոչ
միայն կամ վոչ այնքան սպառողական մթերքների
սով ե, վորքան արտադրության միջոցների:*

Ել չենք խոսում այն մասին, վոր կտորեղենով և
սապոնով գուղատնտեսությունը չի կարելի տանել
սոցիալիզմի ճանապարհով, վոր մեր գուղատնտեսա-
կան լեռը կը դում չթով ու սապոնով սոցիալիզմ չենք կա-
ռուցելու:

Ել չենք խոսում այն մասին, վոր ուշագրության
կենտրոնը դարձնելով առհասարակ անհատ տնտեսու-
թյունների բարձրացման վրա և մոռացության տալով
կոլտնտեսությունները և խորհրդակին տնտեսություն-
ները, դա կնշանակի գուղղում ուժ տալ այն գործոն-
ներին, վորից կապիտալիզմ և առաջ գալիս:

Ել չենք խոսում այն մասին, վոր չթով ու սապոնվ չե, վոր մենք կարող ենք մեր դեմ պատրաստվող պատերազմներում հաղթող դուրս գալ, վոր հենարան ունենալով միայն թեթև արդյունաբերությունը, մեր բանակը չի կարող կռվել տեխնիկապես ուժեղ բանակների դեմ:

Այսպիսով տեսնում ենք, վոր գնալ այն ձանապարհով, ինչ վոր առաջարկում են վերը հիշված տեսակետի կողմանակիցները (այդ տեսակետը մենք անվանում ենք աջ տեսակետ) դա նշանակում է 1) միքանի ժամանակից հետո բազմապատկել մեր զժվարությունները, մասնավորապես ապրանքալին սովորական մթերքների, 2) դա նշանակում է գյուղը շտանել սոցիալիստական ուղիով, 3) դա նշանակում է թուլացնել մեր բանակի սազմունակությունը; Այլ խոռոքով, ուղարկած են ուժ տալ այնպիսի



պայմանների, վորոնք կստեղծեն (սուր առլրանքային սովի հիման վրա) շատ լուրջ քաղաքական բարդություններ մեր լերկում, կտանեն գլուզի և քաղաքի շաղկապի թուլացում, գլուզում կապիտալիստական ելեմենտների առաջացման և ծաղկման, մեր ռազմունակության թուլացման, ուրիշ խոսքով, այդ ռեցեպտը կտաներ մեզ գետի Խորհրդացին իշխանության թուլացում, և կապիտալիզմի ուժեղացում մեր լերկում:

Պարզ ե, վոր կուսակցությունը չի կարող գնալ այդ ուղիով: Մեր կուսակցությունը մեր դժվարությունների պատճառն ուրիշ տեղ և գտնում, մեր կուսակցությունն ուրիշ միջոցներ և առաջադրում այդ դժվարությունները հիմնովին վերացնելու:

Հորոնք են մեր դժվարությունների պատճառն ըստ կուսակցության տեսակետի: Հիմնականում այդ դժվարությունների պատճառն այն «ժառանգություն» ե, վոր ստացավ Խորհրդացին իշխանությունը նախկին կարգերից: Ի՞նչ եր ներկայացնում այդ ժառանգությունը՝ գլուզացիական լերկիր, իր մանր արտադրությամբ, պրիմիտիվ տեխնիկայով. արդյունաբերության տեսակետից՝ համեմատարար զարգացած ելին թեթև արդյունաբերության վորոշ զնուզերը. ծանր արդյունաբերությունը բարձի թողփած. խոշոր չափով կախում ունեցած արտասահմանյան լերկուներից. մի ինուրով՝ անտեսապես և տեխնիկապես հետ ընկած լերկիր, վորն ավելի լեր քարայրի իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների հետևանքով. Յեզ այսպիսի լերկում, միայն մեր ուժերի վրա հենված, շրջապատված թշնամիներով, վորոնք ամեն բոլոր զավեր են նյութում մեր գեմ, մենք նպատակ ենք դրել հաս-

նել և անցնել կապիտալիստական լերկուների անտեսական, տեխնիկական մակարդակից: Ի՞նչ էրկե, նման պայմաններում այդ դժվարությունները վորոշ ժամանակ անխուսափելի ելին ե են:

Ի՞նչ միջոցով մենք դուրս կգանք այդ դժվարություններից: Այս հարցին, ինչպիս գիտենք արդեն, պատասխան ե տվել գեռ 14-րդ համագումարը: Նա ասել է, վոր մեր դժվարությունները հաղթահարելու, սոցիալիզմ կառուցելու, մեր ռազմունակությունը բարձրացնելու միակ ճանապարհն ե—մեր լերկիր ինդուստրիալիզացիան:

Մեր լերկիր ծանր արդյունաբերության զարգացումը, այն արդյունաբերության, վոր մեքենաներ և արտադրում, մեքենաներ պատրաստելու թե թեթև արդյունաբերության և թե գլուզատնտեսության համար:

Ինչու անհրաժեշտ ե ծանր արդյունաբերության զարգացմանը զարկ տալ, կամ ինչու ծանր արդյունաբերությունը զարգացնելով, մենք վերջ կտանք մեր դժվարություններին: Հենց վերցնենք լայն սպառզական ապլանքների սովոր:

1. Վորպեսզի թերել արդյունաբերությունը շատ ապրանքանի տակ է և արդյունաբերության մեջնաներ լին հում նյութ: Վայր արդյունաբերությունն ե տալու այդ մեքենաները. Մանր արդյունաբերությունը:

2. Վորպեսզի մեր գլուզատնտեսությունը շատ պարենավորան միերեներ լին հում նյութ է, հարկավոր ե մեր գլուզատնտեսության տեխնիկան բարձրացնել տալ նրան տրտկար, գլուզատնտեսական բարդ մեքենաներ, փոցին, սեպարատոր և այլն:

Վ՞՞ր արդյունաբերությունն և տալու այդ մեքենաները. — Ծանր արդյունաբերությունը:

3. Վորպեսզի զյուղատնտեսությունը տանենք սոցիալիստական ուղիով, անհրաժեշտ և նոր տեխնիկայի (մեքենաներ) հիման վրա վերակառուցել նրան (գյուղատնտեսությանը): Ո՞վ և տալու այդ նոր տեխնիկան, նոր մեքենաները. — Ծանր արդյունաբերությունը:

4. Վորպեսզի մենք բարձրացնենք մեր ռազմունակությունը, կարմիր բանակի տեխնիկան, անհրաժեշտ են նույնպես ռազմական տեխնիկական միջոցները: Ո՞վ և տալու այդ տեխնիկական միջոցները. — Ծանր արդյունաբերությունը:

5. Վորպեսզի մեր յերկրում անգործությունը, մասնավորապես գյուղական անգործությունը վերացնենք, անհրաժեշտ և հենց գյուղատնտեսության մեջ ստեղծել արդյունաբերություն, վորը մշակի գյուղատնտեսությունից ստացած հում նյութը: Ո՞վ և տալու միջոցները այդ արտադրությունները գլուխ բերելու համար. — Ծանր արդյունաբերությունը:

6. Վերջապես, վորպեսզի վերացնենք մեր հաղորդակցության (յերկաթուղի, խճուղի և այլն) պակասի չարիքը, բնչ պետք և անել, — պետք և զարգացնել ծանր արդյունաբերությունը:

Այսպիսով տեսնում ենք, վոր ծանր արդյունաբերության բարձրացումը յեվ զարգացումը ներկայումս հանդիսանում է այն խոռոր լծակը, վորով մենք կարող ենք ասիմանաբար վերացնել մեր բոլոր դժվարությունները իմբնովին, վորով մենք կարագացնենք սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում, վորով կբարձրացնենք մենք մեր ռազմունակությունը: Դրա համար ել Համար կոմկուսի

Կենտակոմի Նոյիմբերյան պլենումը վորոշել և շարունակել մեր յերկրի ինդուստրիալիզացիան նույն թափով, շարունակել մեր արդյունաբերության զարգացումը մի այնպիսի թափով, վոր մի կողմից ապահովի առնասարակ ամրող ժողովրդական տնտեսության բարձրացումը և մլուս կողմից ապահովի մեզ այն, վոր մենք ամենակարձ ժամանակում հասնենք և անցնենք կապիտալիստական յերկրների տնտեսական և տեխնիկական մակարդակին:

4. Ի՞՞Չ ԱՆԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ ԱՅՍ ՏԱՐԻ

Ստուգիչ թվերի համաձայն 1928/29 տնտեսական տարում մեր ծանր արդյունաբերությունը պետք է 20% -ով ավելի արդյունք տա, քան 1927/28 թվին, իսկ թիթե արդյունաբերությունը՝ 15% -ով: Ինչպես տեսնում ենք, արդյունաբերության զարգացման նախագծված թափը շատ քիչ բանով է տարբերվում անցյալ տնտեսական տարվա թափից:

Զարգացման այս թափն ապահովվում է նախ նրանով, վոր վերջին յերեք տարվա ընթացքում մեր կապիտալ ներդրումներն արդյունաբերության մեջ հավասար են գրեթե 3.220.000.000 ռուբլու, հետեւապես այս ներդրումների վորոշ մասը պետք է արգեն սկսեն արդյունք տալ. մլուս կողմից՝ այս տարվա ներդրումները կազմում են 1.650.000.000 ռուբլի: Այլ խոսքով մենք այս վերջին տարիներս մեր արդյունաբերության մեջ մտցրել ենք (այս տարին հետը հաշված) մոտավորապես հինգ միլիարդ ռուբլի, վորի եֆեկտը մասմբ կզգանք այս տարի, իսկ աստիճանաբար, տաշ

բեցտարի այդ ներդրումների արդյունքը, հետևանքն
ավելի զգալի և շոշափելի կղառնա:

Այդ մեկ միլիարդ վեցհարյուր հիսուն միլիոնից
ծանր արդյունաբերությանը հատկացված և մեկ միլ-
իարդ 173 միլիոն սուբլի, իսկ թեթև արդյունաբերու-
թյանը՝ յերեք հարյուր վաթուն և հինգ միլիոն: Կա-
րող ե թվայի, վոր թեթև արդյունաբերությունը շատ
ենք չնեղացրելո, սակայն դա ճիշտ չե, վորովհետեւ,
կրկնում ենք, հում նույթի հնարավորությունը միայն
այդ չափով ե պահանջում ներդրումներ անել և ճշում
կողմից ելծանր արդյունաբերության զարգացման նման
թափը, ինչպես այդ տեսանք նախորդ գլխում, հրա-
մայական պահանջ և մեր ժողովրդական տնտեսության
ընդհանուր շահերի տեսակետից:

Հայտնի յե, վոր արդյունաբերության մեջ կապի-
տալ ներդրումները կատարվում են յերկու ձևով. նախ
պետական բյուջեից են տրվում արդյունաբերությանը
և յերկրորդ՝ արդյունաբերության մեջ առաջ յեկած
կուտակումներից:

Նախագծված 1.650 միլիոնից պետական բյուջեի
գծով արդյունաբերությանը տրվելու յե 819 միլիոն
սուբլին, իսկ մացածը՝ այսինքն 731 միլիոն սուբլին
արդյունաբերությունն իր գույքը կուտակումներից պետք
ե իրեն տրամադրի: Հարց ե ծագում, ինչ միջոցներից
կարող ե արդյունաբերությունն այդ 731 միլիոն սուբ-
լին տալ:

Կենտրոնական կոմիտեի պլենումը վորոշել է,
վորպեսզի այդ 731 միլիոն սուբլին արդյունաբերու-
թյան մեջ կուտակվի ինաշիվ ինքնարժեքի 70% ի
ջեցման: Այսպիսով ինքնարժեքի ամեն մի տոկոս իջեց-

նելը—նշանակում է կուտակել 100 միլիոն սուբլի:
Յեթե մեզ չհաջողվեց արդյունաբերության մեջ ինք-
նարժեքն իջեցնել 70%՝ այդ կնշանակի, վոր նա-
խագծված կապիտալ ներդրումները չեն իրագործվի, այդ
կնշանակի, վոր մեր արտադրակտն և ֆինանսական
պլանը կխախտվի, այդ կնշանակի, վոր առհասարակ
մեր ժողովը տնտեսության այս տարվա ընդհանուրը ար-
տադրական պլանը կխախտվի: Դրա համար ել մեր
արդյունաբերական որգանների, ձեռնարկությունների,
մեր պրոֆեսիոնալ կազմակերպությունների վրա
դրված և շատ մեծ պատասխանատվություն մեր այս
տարվա արտադրական պլանի իրագործման խնդրում:

Յերկրորդ անելիքն արդյունաբերության ասպա-
րիզում, դա հատուկ ուշադրություն դարձնելն և չու-
գունի արտադրության: Ծանր արտադրության գրեթե
բոլոր ձևուղերի զարգացումը կախում ունի չուգունի
արտադրությունից: Յեթե արդյունաբերության ուրիշ
ձևուղերի նկատմամբ մենք անցել ենք նախապատե-
րագյան մակարդակը՝ չուգունի արտադրության աս-
պարիզում մենք շատ հետ ենք մնում: Այսպես՝

1927/28թ. չուգունի արտադրությունը կազմում
եր միայն 79%՝ նախապատերագյական շրջանի,
մինչդեռ աճող թե գյուղատնտեսության կողմից և թե
առհասարակ արդյունաբերության կողմից չուգունի
պահանջը նախապատերագյական շրջանից շատ և շատ
ավելի յե: Կենտրոնական կոմիտեի պլենումի վորոշ-
մամբ պետք ե արագացնել մի քանի հսկա գործարան-
ների հիմնադրման գործը (Ուրալում, Մերձգորգյան
շրջանում, Սիրիում) այնպես, վորպեսզի մոտակա տա-
րիներում մեր տնտեսության այդ «նեղ տեղը» իսպան
վերանա:

Յերբորդ անելիքը՝ դա շինանյութերի արտադրության մեծացումն և և նրանց ինքնարժեքի $15^{\circ}/_0$ իջեցումը։ Շինանյութերի պակասը շատ խոշոր արգելք և հանդիսանում ինդուստրիալիզացիայի իրազործման ասպարիգում։ այդ պակասի շնորհիվ նոր գործարանների կառուցումը, ինչպես նաև բանվորական բնակարանների կառուցումը նույնպես գանձաղում եւ։

Չորրորդ հարվածային խնդիրը՝ դա աշխատանքի ուսցիոնալիզացիայի և արտադրողականության բարձրացումն եւ ծիչտ եւ, անցյալ տնտեսական տարրում մենք ունեցինք այդ ասպարեզներում վորոշ հաջողություններ։ Վերջին տարիներում 1927/28 թվականը առաջին տարին եր, յերբ աշխատանքի արտադրողականությունն ավելի բարձրացավ, քան աշխատավարձը։ բայց յեթե մեր ուսցիոնալիզացիայի և աշխատանքի արտադրողականության արդյունքները համեմատելու լինենք կապիտալիստական յերկրների հետ, կտեսնենք, վոր մենք շատ և շատ հետ ենք մնում։ Համաձայն լնկ. Խիկովի տվյալների, այն աշխատանքը, վոր կատարվում եր Հյուսիսային Այժերիկայի Միացյալ Նահանգներում 1914 թվին 100 բանվորով, 1924 թ. նույն աշխատանքը քիմիական արդյունաբերության մեջ կատարվում եր 65 բանվորով, մետաղագործության մեջ 59 բանվորով, յերկաթաւղում—30 բանվորով։ Աշխատանքի արտադրողականությունն այնտեղ 1925 թվին համեմատած 1919 թվի հետ, բարձրացել է $59^{\circ}/_0$ -ով, իսկ արդյունաբերության առանձին ճյուղերում ել ափելի։ որինակ, ավտոմոբիլային արդյունաբերության մեջ նույն 5 տարում աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է $172^{\circ}/_0$ -ով, նաևթային արդյու-

նութերության մեջ՝ $83^{\circ}/_0$ -ով, ուղինի արդյունաբերության մեջ՝ $211^{\circ}/_0$ -ով։ Մինչդեռ մենք այս ասպարիգում շատ հետ ենք մնում, կրիայի քայլերով ենք տուաջ զնում։

Դրա համար ել այս տնտեսական տարրում ուսցիոնալիզացիան, աշխատանքի արտադրողականության բարձրացումը մեր լուրջ խնդիրներից մեկն եւ։

Վերջապես հինգերորդ խնդիրն է՝ ապահովել այս տարի մեր արդյունաբերության $20^{\circ}/_0$ -ի անցումը։ Դժամյա բանվորական որվան։ Հայտնի իւ, վոր Հոկտեմբերյան Հեղափոխության տասնամյակի առթիվ կենարոնական Գործադիր Կոմիտեի նստաշրջանն իր մանիկեստում գտել եր անհրաժեշտ, վորպեսզի մոտակա տարիներում Խորհրդային Միության մեջ կիրառվի 7. ժամյա բանվորական որը, սակայն այնպիս, վոր մի ժամվա կրծատումը չանդրագանա բանվորի աշխատավարձի վրա, ընդհակառակը, այդ կրծատումը, շնորհիվ ուսցիոնալիզացիայի և աշխատանքի արտադրողականության բարձրացման պետք եր բարձրացնի բանվորի աշխատավարձը։ Մեր բոլոր թշնամիները գտնում են, վոր բանվորական որվա կրծատում դա մի գեմագոգիայի միջոց եր մեր կողմից, վոր մենք չենք կարող իրագործել մեր խոստումը։ Սակայն փորձը ցուց ավելց կենարոնական Կոմիտեի նոյեմբերյան պլենումի դիրեկտիվերն իրական գրավականներ են, վոր մեր կուսակցությունը դա կիրագործի։ Բայց նույն փորձը ցուց ավելց, վոր մենք հաճախ շնորհիվ անկազմակերպության, նախապատրաստական աշխատանքների վոչ լավ տանելուն, ունենք խոշոր թերություններ, ձեռնարկությունները 7. ժամյա բանվորական որվան վերածելու ժամանակ։

Կենտկոմի պլենումն առաջարկել են համապատաս
խան որգաններին շտապ միջոցներ ձեռք առնելն կատ-
ված թերությունները վերացնելու և առնասարակ
նրանցից զերծ մնալու:

Այս այն զլլավոր խնդիրները, անելիքները, վոր
մենք ունենք այս տարի մեր արդյունաբերության,
կապիտալ ներդրումների ասպարիդում: Խոսք չկա, վոր
դրված ինդիբներն այնքան լուրջ են և պատասխանա-
տու, վոր պահանջում են մեր բոլոր ուժերի լարվա-
ծությունը, աշխատանքի վորակի բարձրացումը, վորով
հետեւ միայն այս դեպքումն է հնարավոր իրադործել
արդյունաբերության առաջ դրված հիմնական խնդիր-
ները:

5. ԻՆՉ ԱՆԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԻՆՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ ԱՅՍ ՏԱՐԻ

Հայտնի է, վոր զյուղատնտեսությունը, բայց
այն, վոր գնում ե արդյունաբերական ապրանքներ,
նաև (զյուղատնտեսությունը) տալիս ե քաղաքին՝ ար-
դյունաբերությանը պարենավորման մթերքներ և հում
